ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ք. Երևան «06» հունիսի 2025թ N 1584-Ա

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. «ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի

(հավատարմագրման գրանցահամար՝ N 016/S-056) N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. «ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակել մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը (2028 թվականի նոյեմբերի 5), շնորհել նշանակման վկայական և նույնականացնող համար՝ Ն-17 (H-17) 2025:

3. «ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
2102870448

2025-06-18 14:26:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թ.
_____ ____-ի N _____-Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2228-Ն որոշում,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «1000 Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատներին ներկայացվող անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 1922-Ն որոշում:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգեր.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ ընդունված «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 004/2011),

2. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 879 որոշմամբ ընդունված «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական

համատեղելիություն» Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 020/2011),

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 113 որոշմամբ ընդունված «էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 037/2016):